

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան Ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան Ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՒԿ

Բոլթիւնք ետ չեն
տրուիր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՀԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Եթե կ'ուզե՛ք «Հայեղի»-ին մեջ աղոտ երեւնալ,

Պարսիք սիրուն եւ սգնիւ դեմք մը ունենալ:

ԿՐԵՏԱԿԱՆ ՆՕԹԵՐ

(Մեր մասնատու թղթակցեն)

Գանտիա, 19 Ապրիլ 1899

Կացութիւնը փոխուած չէ: Թուրքերը ամեն օր հարիւրներով կը գաղթեն դէպի Սելանիկ եւ Իզմիր, հարուստ թուրքերն ալ կամաց կամաց պիտի ըսկին գաղթել եթէ կղզին բոլորովին յանձնուի Եօրկիոս իշխանին. ու թէեւ Անգղիացիք եւ Իշխանը յորդոր կը կարգան չի գաղթելու, բայց անոնք մօտիկ չեն ըներ, առարկելով թէ յոյները զիրենք պիտի հալածեն եւ հանգիստ չպիտի թողուն: Թուրքերը իրենց Գուրպան պայրամը լաւ տօնեցին. Արիմէի իրիկունը Անգղիական զօրանոցէն մէկ քանի թնդանօդներ արձակուեցան 'ի պատիւ Պայրամի եւ Իսլամ ժողովուրդին. հետեւալ առաւօտ 40 հոգիէ բաղկացեալ Անգղիական զինուորական նուազախումբը մղկիթին առջև շարուեցաւ. երբ ժողովուրդը մղկիթէն դուրս ելաւ. անմիջապէս թափոր մը կազմուեցաւ իւրե-

մաներէ, իմամներէ, շէյխներէ եւ Անգղիական պաշտօնէութենէ. մինչև կառավարական զօնազը նուագով պատուեցին պայրամը, որոյ համար իսլամ ժողովուրդը իր բարձր շնորհակալութիւնը յայտնեց:

Ապրիլ 16 Աւագ ուրբաթ գիշեր ժամը 10ին (ը. ե.) ըստ սովորութեան յուշաց եկեղեցիէն դուրս ելաւ Քրիստոսի թաղման թափորը. որուն առջևէն կերթային տեղւոյս նորակազմ ոստիկանութիւնը, որոնցմէ ետքը գումարտակ մը Անգղիացի զինուոր, անոնց ետեւէն ալ քաղաքիս կառավարիչը, որ Անգղիացի է, մի քանի բարձր պաշտօնեաներով. յետոյ դպիրք, կրօնականք եւ թաղումը, անոնց կը հետեւէին դարձեալ նիզակաւոր զօրքեր: Եկեղեցիին մօտ մեծ շուկայի մէջ դէմ առ դէմ գտնուած խանութներու ճակատները Անգղիոյ թագուհիին, Յունաստանի թագաւորին ու Եօրկիոս իշխանին պատկերները կախուած էին, որոնք կանթեղներով շրջապատուած էին. թափորը անցնելու պահուն հրախաղութիւններ եղան: Աւագ շաբաթ սոսկալի փոթորիկ մը ելաւ,

կայծակը ինկաւ. յունաց մայր եկեղեցիին գմբեթին վրայ ուր շատ բարձր է. քաղաքագլխար շանթարգելին շնորհիւ փնտ մը չեղաւ. քիչ մը վերջն ալ երկրաշարժի թեթեւ ցնցում մը զգածուեցաւ :

Զատիկին առտուն Յունաց եկեղեցիին խուռն բազմութեամբ լեցուած էր. նոյն օրը մեր Արժ. Տ. Մանուէլ հայրն ալ Յունաց առաջնորդարանը այցելութեան գնաց իր հետն ունենալով մի քանի ազգայինք և Տիար Միհրան Թէքաթլեան, (Թարգման և գրագիր քաղաքիս կառավարչին) որ տէր հօր կողմէ առաջնորդին քով Թարգմանի պաշտօնը կատարեց : Առաջնորդը մեծ ընդունելութիւն ըրաւ մեր քահանային և եկեղեցի հըրաւիրեց զայն, որ Հայերէն աւետարան մը կարգաց և օրհնեց յոյն ժողովուրդը : Յետոյ Յարութեան թափօրը կազմուեցաւ, որուն մասնակցեցաւ մեր տէր հայրն ալ շուրջառով. որ առաջնորդին քովէն կը քալէր : Նոյն միջոցն Անգղիական զօրանոցէն 4—5 թնդանօգ արծակուեցան ի պատիւ քրիստոնեայ հասարակութեան : Նոյն օրն ալ Անգղիական շինարարական նուագախումբը Թափօրին առջեւէն կը յառաջանար, ինչպէս նաև Անգղիական բարձր պաշտօնեաները և երէցը :

Զմուռնանք ըսել թէ, մեր Տէր հայրը աւագ շաբթուան և Զատիկ տօներուն մէջ զմեզ անմխիթար չի թողուց. ամեն օր աւուր պատշաճի արարողութիւնները կը կատարէր այդ աւերակ շէնքին մէջ, և Զատիկին օրը հօս գտնուող 40-50 հայերս նշխարքներով շնորհաւորեց :

ԳԱՂԹԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

(Այսօրուան թղթաբեր)

Իֆթիխարի ականակուռ պատուանշան՝ Քաղ ժողովոյ ատենապետ Տատեան Յարութիւն փաշայի :

—Այս երեքշաբթի օրը գումարուած կրօն, ժողովը որոշեց իր յառաջիկայ նիստին մէջ նկատողութեան առիւթ Վառ-

նաի մէջ կրկնաժողովութիւն կատարող Հիւսիսեղեան Վէրդ քահանայի մասին Պատրիարքարան հաւած տեղեկագիրները :

ՏԵՂԱԿԱՆ

—Յերուաղէմ ուխտագնացութիւնը տեղւոյս քահանաներէն Արժ. Տ. Մարտիրոս հայրը այս առաւօտ Պուլկարական շողեանաւով քաղաքս վերադարձաւ :

—Տեղւոյս հոգաբարձութեան կողմէ խմբագրութեանս ալ ուղղուած պաշտօնական նամակէն կը տեղեկանանք թէ Հիւսիսեղեան Տ. Վէրդ քահանան, հակառակ իր տուած խօստման, Զատիկ առթիւ յատկապէս Շումլայէն հրաւիրուած Տ. Յովակիմ քահանային արդար իրաւունքը գրպանելէ զատ, տունէ տուն ու խանութէ խանութ պտտելով կը ճգնի եղեր իր անիրաւութիւնները պաշտպանել ու մինչև իսկ յանդգներ է տեղական թերթի մը միջոցաւ հրապարակել իր ստախոսութիւններ ընել :

Մենք արդէն երկու տարի առաջէն այս քահանային ըրած շահատակութիւնները մատնանիչ ըրած էինք. հիմա թող թերահաւատները տեսնեն : Աթէնքի մէջ «մատուռ պիտի շինենք» ըսելով ժողովուրդէն հանգանակած 150 արախմէնը գրպանելով կծիկը դնող մարդ է մը այլ ևս ուղղութիւն և խղճահարութիւն կը յուսացուի :

—Վաղը, կիրակի, տեղւոյս Ս. եկեղեցւոյ Արժանապատիւ Տ. Ասրգիս նորընծայ քահանայ Ղարիպեան հանդերձեալ է Պատարագ և պաշտօն մատուցանել ընդհանուր հաւատքեալ ննջեցելոց հոգւոյն :

—Յառաջիկայ Մայիս 15 շաբաթ գիշեր ի նպատակ Հայաստանի սովելոյ ներկայացում մը պիտի տրուի Սայէտինէնիէի սրահին մէջ ընդ հովանաւորութեամբ կարգադիր մասնախումբի մը :

կը յուսանք թէ Վառնայի հայ ժողովուրդը ներկայ գտնուելով սոյն ներկայացման, իր պարտականութիւնը պիտի կատարէ հանդէպ մեր սովատանջ եղբայրներուն :

— Ամերիկայի մէջ սկսած է հրատարակուիլ «Հայրենիք» ամսնով շաբաթաթերթ մը, ճիշդ «Տիգրիս»ի ծաւալով. որ կը յայտարարէ թէ չը պատկանիր ու եւէ կուսակցութեան (?), մինչդեռ մեր առած ստոյգ տեղեկութեանց համաձայն, անոր գլխաւոր խմբագրապետն է եղբոր այն կարմիր Դաշնակցականը, որ մինչեւ ցարդ իր Չարշաբինարի թղթակցութիւնները կը հրատարակէր արտասահմանեան թերթի մը մէջ. երոնի թէ խոստումը պահէ :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանո Բոժոժիկ և Ընկ.

Լահէյ

Ըստ սրոյժան ժողովոյս խորհրդակցութիւնք գաղտնի պիտի մնան, ուստի Աշխարհի չորս կողմէ հոս հասած լրագրաց թղթակիցները ի նիստ գումարելով . . . գարեջրատան մը մէջ. որոշեցին «ոանկ պիտի ըլլայ, նանկ պիտի ըլլայ» ըսելով, ժողովուրդը խաբէլու համար տեսակ տեսակ մանթարաբանական թղթակցութիւններ պատրաստել :

Աստուած կաբոլութիւն տայ ատոնք կարգացոյ ժողովուրդին :

Վառնա

Վառնայի հացագործք միաձայն հանութեամբ որոշեցին հանդատեան կոչել իրենց . . . էշերը, և անոնց յաջորդ կարգեցին էշ քչոյ երկուստանիները, որոնք երկուշաբթիէն սկսեալ հացերը շալակաբարձ կը բաժնեն կոր տուները :

Այս պատճառաւ հացին քիօն տասը փարա վրայ դրաւ :

Մայիս 1ին, ըստ տեղական հնաւանդ սովորութեան, կարգ մը նախապաշարեալ տիկիներ առտուն կանուխ դաշտ ելլելով վայրի ծաղիկներ ու խո-

տեր ժողվեր, զանոնք հետերնին բաղնիք տանելով պաղ ջուր՝ մէջ ձգեր ու գեղեցկանալու յուսով՝ անով լուացուեր են, սակայն փոխանակ գեղեցկութեան իյ աղբիւրէ բռնուեր են :

Ուլիցա Սառկապուռկա

Հռչակաւոր ամաթէօռուհին մատամ Կիճրէպ անցեալ իրիկուն այն աստիճան գինովցեր է որ, չի կրնալով իր տունը վերագառնալ. փողոցին մէջ ինկեր պառկեր է. քանի մը անցորդներ զինքը կը վերցունեն ու կը տանին . . . իրենց տունը :

Պուրկազ

Վարժարանին դաստուն, Տիար Առնեմ Զիտամ խել մը գաւառացիներու գլուխը անցած . . . սահմանը անցաւ (տաճկաստանի սահմանը չի հասկնաք) : Իր գրպանի «կազմակերպութեան» համար սկսաւ սրճարանէ սրճարան պտտիլ տալու զուռնաներով, ու հանգանակութիւն ընել հայաստանը ազատելու համար (?) ինչպէս ոչ անգամ մը Վառնայի մէջ ժողովուրդը ազատեց . . . Սամաթիոյ պատմութեան մոմտութէն :

ԶԵՆՈՅՑ

Շումու, Ռուսուք, Սիլիսդրէ, Թիլիպէ և Պուրկազէ եղած խնդրանքներու համաձայն, Պ. Բոժոժիկ Վառնայի մէջ գործը լմնցունելէ ետքը՝ զանքաւոր առած՝ այն տեղուանքն ալ պիտի այցելէ :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Արձագանգ Դանուրի մէկ եզերքէն

* * *

Վարժարանի մը համբաւաւոր տնօրէնը այս շաբթու աճեղէ թերթիկ նշանուցաւ վարժուհիին հետ։ Հարսանեաց հանդէսը . . . ստիպողաբար պիտի կատարուի Առաջին Պսակին :

Բոժոժիկ. — Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո՛ւ զորդի աղախնոյ քո . . .

ԴԱՐԱՆԸ

1

Տիւֆավէլ ընտանիքը շինական ընտանիք մըն էր, անդորրաւէտ երեւոյթով ու մեծարելի համբաւով:

Ուրիշ մասնաւոր նշան չունէր:

Փարիզի մէջ ասոր նման ընտանիքներ բաւական թուով կը գտնուին: Աւարժամանի մէջ սենեակ մը վարձած էին:

Այն օրը տիկին Տիւֆավէլ՝ երբ ամուսինը սակարանն էր, արդուզարդը լմնցուցեր էր: Յոյժ նազելի էր տիկին Տիւֆավէլ: Չը գիտեմ ինչ յանձնարարութեամբ Եւլալիա աղախինը տեղ մը զրկեց, ապա սպասեց: Շատ չի բռնեց, վասն զի դուռը զարկին ուրիշ կերպով մը: Պայմանագրուած նշան մըն էր. յալտնի բան: Տիկինը խայտալով դուռը բացաւ ու պարօն մը ներս մտաւ:

— Դո՛ւրս ելաւ. հարցուց նորեկը.

— Այո՛, պատասխանեց կինը վստահաձայն, որովհետեւ սակարանի ատենն է:

— Ա՛հ, սիրելի Լէօնթինս.

Ու սկսան խօսակցիլ:

Չի մոռնանք ըսել թէ երիտասարդը բաւական հաճելի երեւոյթով խարտեաչ և յոյժ քաղցրալեզու պարօն մըն էր:

Խօսակցութեան տաք միջոցին յանկարծ արտասովոր աղմուկ մը փրթաւ:

Կղպանքին մէջն էր այն:

— Մարդ եկաւ, բացագանչեց տիկին Տիւֆավէլ.

— Ա՛հ, սատանան տանի. ան եղած պիտի ըլլայ.

— Ամուսի՞նս.

— Անշո՛ւշտ:

— Վա՛յ անիծեալ: Պէտք է որ պահուրտիս:

— Բայց ո՛ւր.

— Ասկէց ուրիշ տեղ չի կայ:

Ու մեծ դարան մը ցցուց:

Չաւեշտներու մէջ իրաւ դարաններն

ալւոր ծառայութիւն կընեն, սակայն մասնաւոր կենցաղավարութեան մէջ ալ դեռ կը գործածուին:

Դիտողութիւն կամ վարանում չէր վերցընէր ժամանակը: Խարտիչագեղ պարօնը մէջը նետուելուն պէս՝ տիկինը հաշիւ հազ ատեն ունեցաւ բանալին դարձնելու: Էրիկը ներս մտաւ:

2

— Ինչպէ՛ս... ըսաւ բարձրաձայն, տակաւին դուրս չե՞ս ելեր:

— Ո՛չ բարեկամս, սպասուհին զիս կը սպասեցնէ:

— Բայց եթէ հիմա անմիջապէս զինքը չերթաս չի տեսնես, հիւանդութիւնը իմանալէ ետքը, Կալքէն մօրաքոյրդ շատ անտաբեբ պիտի գտնէ բեղ: Դուռն չէի՞ր ըսողը թէ հեռագիր մը առած ես Կալքէն մօրաքոյրդ հիւանդութիւնը ազդարարող:

— Այո՛, բարեկամս, այո՛,

— Ուրեմն պէտք է որ հոն երթաք.

— Սա կայ որ...

Ու տիկին Տիւֆավէլ շէր իշխէր դարանին կողմը նայիլ:

— Սա կայ որ պէտք չէ, ըսաւ պարօնը հրամայական կերպով, թերեւս կը փափաքիս որ մօրաքոյրդ ժառանգութենէ զմեզ զրկէ: Արդարեւ իրաւունք ալ ունեցած պիտի ըլլայ, եթէ մեղապարտ անտաբեբութիւն մը ցցուցած ըլլանք իրեն: Օ՛ն ուրեմն, աճապարէ՛, գլխարկդ ու քէյթիկնդ հագիր.

— Շատ ո՛ւշ է:

— Ահա այդ պատճառաւ շտապելու ես: Օ՛ն, շո՛ւտ, շո՛ւտ: Ընթրիքին պիտի վերագառնաս. այդչափը բաւական է:

Պ. Տիւֆավէլ աչքը ժամացոյցին վրայէն ասդին չէր առնէր:

Տիկինը գլխարկը գլուխը դրաւ ու քէյթիկնը ուսու առաւ: Մինչև վերջին վայրկեանը ՚ի զուր պատրուակ մը գտնել փորձեց: Բացայայտօրէն ամուսինը կը գրգռուէր. գըթեթէ ձեռքէն բռնեց դուքս հրեց զանի:

Մեծդ Աստուած. ի՞նչ պիտի պատահէր արդեօք:

Սանդուղներէն վար իջաւ, աննկարագրելի յուզմունքի մէջ:

Իսկ Պ. Տիւֆազէլ տակաւին վերէն կը պոռար:

«Ընթրիքէն առաջ վերագառնալու պէտք չունիս»:

3

Տիկին Տիւֆազէլի մեկնելէն հինգ վայրկեան ետքը, դուռը վերստին զարկին:

Պարոնը գնաց բացաւ:

Եկողը թխագեղ և ծաղկահաս տիկին մըն էր:

— Մինա՞ն էք, հարցուց:

— Միս մինակ:

— Ո՛րպիսի անխոհեմութիւն, զիս տուններնիդ բերել տա՛ւ...

— Լաւ, պիտի հաճէի՞ք երթալ պանդոկի մէջ անուննիդ վտանգել:

— Չեմ ըսեր որ, բայց...

— Ես վստահ էի որ կինս պիտի այցելի իւր մօրաբորով, որ հիւանդ է:

— Երանի թէ չի վերագառնայ:

— Ընթրիքէն առաջ՝ ո՛չ: Եւ ես ալ տիկա զգուշութեամբ պատուիրեցի:

— Ա՛հ Օսպար:

— Սիրելի Զուարթուն:

Խօսակցութիւնը, ինչպէս որ տիկին Տիւֆազէլի և խարտիչագեղ երիտասարդին, նըմանապէս Պ. Տիւֆազէլի և թխագեղ տիկնոջ միջև ալ միեւնոյն տաքութեամբ չուշացաւ հասաւ:

Հա՛, չի մոռնանք, խեղճ մարդը դարանին մէջն էր: Իմ պարտքս է զայս ձեզ յիշեցնել, ինչպէս որ անորն ալ՝ խեղդուելու վտանգին չի նայելով՝ տեղէն չի շարժիլ էր:

Յանկարծ, խօսակցութեան ամենաբուռն հոսանքի պահուն նորէն դրան զարկին:

— Ինչ կայ, պոռաց թխագեղ տիկինը:

— Կինս ըլլալու է, պատասխանեց մարդը, նա միայն ուրիշ բանալի մը ունի:

— Կորսուեցա՞յ...

— Անհոգ եղիք. ես հոս եմ. կաղաչեմ ձեզ. միայն թէ քիչ մը մտէք սա...

Ու դարանը ցոյց տուաւ:

Թխագեղ տիկինը վազեց. մինչդեռ Պ. Տիւֆազէլ իւր կնոջ ընդ առաջ կերթար. և այս բանը արգելք եղաւ իրեն՝ զարմանքի ու զարհուրանքի քիչը լսել թխագեղուհւոյն, որ դարանին մէջ ուրիշ մարդկային մարմին մը կը զգար, որ մրմնջեց:

— Շնորհ ըրէք, ձայն մի՛ հանէք, ապա թէ ոչ՝ բաներնիս բուսած է:

4

— Ի՛նչ, դո՛ւ ես, պոռաց Պ. Տիւֆազէլ, մօրաբորդ ձգեցի՞ր, հիւանդ մօրաբորդ: Տիկին Տիւֆազէլ չի կրնալով դիմադրել՝ իր կալանաւորը ազատելու յուսով վերագարձեր էր:

— Մօրաբորդս լաւ է, բարեկամս, ըսաւ, կատարելապէս լաւ: Դուրս ելած էր:

— Ատ ի՛նչ ըսել է:

— Չե՛ս գիտեր թէ այլանդակ առողջութեան աէր կին մ'է: Զղային տագնապ մը ունեցեր է:

Երկու ամուսինք հաւասարապէս տատամսագին զիրար կը խորազննէին:

Վերջապէս Պ. Տիւֆազէլ քիչ մը խելքը ամիսփեց:

— Օ՛. եթէ այդպէս է, սիրելի կինս, քեզի հետ Բալէ—Բուայալի վինուորական նըւագարանը երթանք մտիկ ընենք, քանի որ տակաւին մէկ ու կէս ժամ ատեն ունինք ընթրիքին:

Ու մտքէն կըսեր «Այս միջոցիս, միւսը կրնայ կծիկը դնել»:

Կինն ալ սանկ կը մտածէր «Նախախնամութիւնն է որ վրանիս կը հսկէ, ինչու որ մեր բացակայութեան միջոցին խոյս կուտայ երիտասարդը»:

Հինգ վայրկեանէն Տիւֆազէլ ընտանիքը տունէն մեկնեցան, դէպի Բալէ-Բուայալ երթալու համար:

5

— Ա՛հ, պարոն...

— Ա՛հ, տիկին...

Խարտիշագեղ պարոնն ու թխագէմ տիկինն էր որ գերութենէ կաճրակուէին :

— Եթէ քիչ մ'ալ մնայի, պիտի խեղ-գուէի, հառաչեց մարդը նուաղաձայն, եւ կէս մը նուաղած՝ ինկաւ թիկնաթոռին վրայ :

— Օ՛ն պարոն, տեսնե՞ք, ուշաբերեցէք, վայրկեանները թանկագին են, ըսաւ թխագէմ կինը :

— Այո՛, տիկին, այդ ճշմարիտ է. շնորհակալ եմ. (ինքն իրեն) հրաշագեղ կին մ'է :

— Մեկնի՛նք, պարոն,

— Տիկին, պէտք է որ մէկ խօսքով բացատրեմ, առանց անոր զիս գող պիտի կարծէք :

— Ես ալ, պարոն, ինչ պիտի կարծէք եթէ...

— Եթե ներելու ըլլաք ինձ մինչեւ կառք հետերնիդ ընկերանալ, ճամբան պատիւ պիտի ունենամ :

6

Երկու ամիս ետքը, վերոյիշեալ խարտիշագեղ երիտասարդը Պուլվարէն կանցնէր, զբաղեալ :

— Այսպէս ո՛ւր, կը վազէք, սիրելիդ իմ թիւիկէն. Այս հարցումը ընողը Պ. Տիւֆազէն էր, որ անոր մօտեցաւ :

— Ներեցէք սիրելիս. կը տեսնէք թէ կը վազեմ, վասն զի ստիպողական գործ մը ունիմ, ինչպէս կ'ունենայ կարգուելու վրայ ելող մէկը :

— Վա՛յ, կը կարգուի՞ք կոր. որո՞հ հետ.

— Սքանչելի թխագէմ գեղուհւոյմը հետ.

— Զոր անշուշտ այս ձմեռ հանդէսներու մէջ տեսած ըլլալու էք :

— Այ թէ հանդէսներու, այլ դարանի մը մէջ.

Կը կարծենք թէ Պ. Տիւֆազէն իրեն խիստ դժուար երեցող այս հանելուկը լուծելու համար Պուլվարին վրայ կեցած՝ ափի բերան տակաւին կը մտածէ...

Թարգմ.

Յ. Վ.

Բոժոժիկ — Եթէ ես հոն ըլլայի, կամաց մը սա խօսքերը կըսէի, «հանելուկիդ լուծումն է՝ Զինչ սերմանես՝ զայն հնձես» :

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱՒ...

(Շարունակութիւն)

— Շիտակ պիտի ըսես, Պ. Բոժոժիկ, որովհետեւ աչքերէդ կը վախնամ :

— Պիտի տեսնա՞ք նստեցէք նայիմ. (կշռեղով) երեսուն եւ վեց :

— Անցած տարի ալ այսչափ եկայ.

— Է՛հ, այդ կաւուկ եւ համեղ բնաւորու թեւամ ոչ վրայ կը դնես ոչ ալ վրայ կ'առնես :

— Անանկ է նէ՛ ա՛ռ սա հնոցը.

— Շնորհակալութիւն՝ տիար շրջահայեցութեան :

— Աղջոյն ձեզ.

— Վա՛յ, հրամայեցէ՛ք տէր Յնձայ հար, ի վերուստ խնդրէի՛նք՝ ի վերայ երկրի գտանք, նստեցէ՛ք.

— Կը ներէք, ժամանակ չունիմ՝ նըստելու, որովհետեւ այցելութիւններս տակաւին լմնցուցած չեմ.

— Կը լմնցնես. ձեռքէդ առնող չի կայ. այս ալ այցելութիւն մըն է, «յիշեցի՛ր ըզխանթարն եւ զկշիռն» կըսէ երանելին Գաւիթ, նստեցէք որ ձեզ ալ կշռենք :

— Բայց... չ'օրհնած, տեսնողը ինչ կըսէ.

— Աւշածը թող ըսէ՛ զուն արդէն սորված փորիկ ես, քու մասիդ այսչափ ըսուած ներուն համար հոգ ըրած ունի՞ս մի...

— Բայց...

— Երկան մ'ըներ. բայց մայց չի կայ. սանկ նստէ նայիմ... աֆէրիմ. (կշռեղով) օ՛ օ... սա ինչ է, տէր պապա, դուն 10 փարա պիտի տաս :

— Ինչո՞ւ... պէշ փարա կը պոռայիր կոր.

— Պէշ փարան՝ մինչեւ 100 քիլօ համար է, դուն՝ 200 քիլօ կը բաշես կոր.

— Ինչ կըսես, Բոժոժիկ, ես այդչափ չի կամ. հագածս բարակ վերարկու մըն է :

— Վերարկուդ բարակ է ամա, անոր տակը ծածկած ուն համար եւ անվերջ թեւութիւններդ, անիրաւութիւններդ, զորն ա՛ս սենչ կամ զորն խոստովանի՛նք եւ ի լրումն ա՛մ մենեցուն՝ հիւանդ Տ. Յովակիմի ձեռքէն ա՛ռած իրաւունքներդ քիլօ կը կոխեն կոր :

— Հասկցայ. ձեռքէդ աղատում չի կայ, առ սա 10 հնոցը ու մնայք խաղաղութեամբ :

— Հա շէյլէ, տէր ընդ ձեզ : Է՛՛ ճանըմ, կէ՛լ գանթարա, կէ՛լ գանթարա... հրամայեցէք Տիար Արշաւիր. այդչափ հեռուէն մի՛ անցնիք, եկէ՛ք, կշռուեցէ՛ք :

— Եղբայր, ադ ինչ է :

— Մի՛ զարմանա՛ր, երկրին մէկ սովորութիւնն է, որուն կ'ուզենք մենք ալ հետեւիլ. գահաժառանգն անգամ կշռուեր է. թերթերուն մէջ չի կարդացի՛ք. նստէ՛ նայիմ, բայց մի՛ շարժիր... մի՛ շարժիր կըսեմ կոր... տահա չի մոռցար շարժիլ :

կը բաշեմ կոր . . . քառասունը չորս :

— Եղբայր, անցեալ տարի աւելի էի, այս տարի ինչո՞ւ պակաս եկայ .

— Անցեալ տարի ամիրայի նաւատորմիկն մէջ նաւապետութեան փոթորկայոյզ հոգերուն տակ քիչ մնաց հոգիդ վրայ պիտի տայիր, անիկա մոռցար. երկան մ'ըներ, քիչ ծանրութիւն չէր որ վրայէդ նետեցիր ու երեսիդ գոյնը գտար : Ծնոցը տո՛ւր տէ շիտակ Արմատատուն վազէ :

— Տեսնուի՞նք, Տիար Բոթոժիկ.

— Վա՛յ միւսիւ Թուղաճիէֆ, ուր կը վազէք եղեքքեքեք, հոս եկէ՛ք .

— Չգէ՛, գործ ունիմ, միթիւնկ կայ եղեր, հոն ճառախօսել կերթամ կոր .

— Վրաս գրէ . . . հոս եկո՛ւր . . . տանկ քաներու մէջ մի՛ մտնար .

— Չրլար, չըլլար. սիւլֆատ տը ֆէոի օգնութեամբ և էստես տը պիէոի զօրութեամբ պիտի ճառախօսեմ, մերկապապարանոց պիտի ընեմ փարաները ուսողները :

— Վա՛ղ անցի՛ր, եղբայր, անոնք ալ կեցին՝ քու ժամանակը հորին ջուրը վարդի ջուրի տեղ քշել ուղեւիդ մերկապարանոցէն :

— Չըլլար, չըլլար, պիտի երթամ .

— Մ'երկնցնե՛ր, սանկ նստէ՛, կը բաշեմ կոր . . . Եօթանասունը հինգ :

— Եօթանասունը հինգ մի՛ . . .

— Ինչ կը զարմանաս կոր .

— Եղբայր, շատ ծանր եկայ .

— Ես ինչ ընեմ, մտրիդ վէշվէշէի ըշտեմարանը քիչ մը պարպես նէ՛ կը թեթեւանաս . . . Հայտէ երթաս բարով :

— Պ. Բոթոժիկ, մեզի ալ կը կշռես .

— Ինչո՞ւ չէ, տիարք կաճառակներ, հրամանեք, նստեցէք :

— Ըստ օրինի նախ և առաջ ծանրութեամբ ամենէսերիցայոյնը, միւսիւ Ֆըշֆըշը կշռելու էք. ուստի անոր բալթօին տառան առէք և . . .

— Անոր տառան արգէն աւնուած է, ասկէց զատ, խանթարս այնչափ թեթեւ բան չի քաշեր, ամենքդ ալ նստեցէք որ քիլօ կոխէ .

— Անա՛նկ ընենք կըսես .

— Ուրիշ ճար չի կայ . ուղէք չուգէք անանկ պիտի ընենք. հայտէ նստեցէք նախիմ . . . կը բաշեմ կոր . . . հանգարտ նըստեցէք . . . մի՛ օրուիք. (կշռելու վրայ) աս ինչ է, մէջերնիդ օտարակա՞ն կայ որ այսչափ ծանր կը կշռէք կոր .

— Պ. Շաւարշը հետերնիս է .

— Ատ ուսկէ՞ց մէջերնիդ մտաւ . դուրս

հանեցէ՛ք .

— Եղբայր, ընկերնիս է . չենք կրնար դուրս հանել. ամօթ բան կըլլայ :

— Անանկ է նէ՛, անոր շալկած 40 քիլօի չափ խեղադիւրումներու ծանրութիւնը զեղջելով, դուք ամենքդ մնաք յարպանօք 4 1/2 քիլօ :

— Ինչ կըսես Բոթոժիկ, սխալ է .

— Աղմուկ չուղեր, ու խօսքը մէջերնիս. բալթօներնուդ, ու կանքերնուդ տառաները չեմ զեղչած, ապա թէ ոչ՝ 4 ու կէս ալ չի պիտի բաշէք :

— Այսչափ ալ թեթեւ . . .

— Չէք հաւտար նէ՛ ձեր մօտը գտնուող Պ. Գրպան Գօնթրօլէոեանին վկայութեանը դիմեցէք, որ ամենակին չի ստեր : Հայտէ, երթաք բարով :

— Բոթոժիկ, թեւիդ տակէն ո՞վ կանցնի կոր .

— Օ՞, միւսիւ Սիմօնօֆ, ասանկ ո՛ւր բարով, գրաւ կը դնեմ թէ այս 125րդ անգամն է որ այսօր պիպլիօքեք կերթաք .

— Այո՛ եղբայրս, պիպլիօքեք կերթամ .

— Այսօր խտրեցէ՛ք է . կը կշռուին .

— Շատ ձիշդ է, այսօր խտրեցէ՛ք է, կը կշռուին .

— Պէտք է նստիլ խանթարին վրայ .

— Այդպէս է, եղբայրս, պէտք է նըստիլ խանթարին վրայ .

— Ու ոտքերը գետնէն կտրելու է .

— Այո՛, ոտքերը գետնէն կտրելու է .

— Կը բաշեմ կոր . . . քսանը հինգ .

— Քսանը հինգ մի՛. վա՛յ սարսափելի, ինչո՞ւ համար տասը քիլօ պակաս եկայ :

— Որովհետեւ 10 քիլոնոց ձմեռուան բալթօդ ու գալթագդ այս միջոցիս վրադ չեն :

— Ձիշդ է, որովհետեւ 10 քիլոնոց ձմեռուան բալթօս ու գալթաքս այս միջոցիս վրաս չեն : Մնաք բարեաւ .

— Հիգնոցը չի մոռնանք .

— Հինգոցը չի մոռնանք . . . տամ եղբայրս, առէ՛ք. ծառայ եմ .

— Երթաք բարով :

— Բոթոժիկ, Արմատախոյզը կանցնի կոր .

— Վա՛յ, Տիար Եոսեփանէսօֆիչ, հրամանեցէ՛ք, փութացէ՛ք բազմիկ ՚ի գանթար :

— Նախ և առաջ ցոյց տուէք ինձ այդ հայկական զանքաւ բառին արմատը :

— Պատուելի, ասիկա զաւգաւթի սերունդէն չէ որ արմատ ունենայ, չէ՞ս տեսնար, հափսէն կախուած է :

(Շարունակելի)

Նոր Հրատարակութիւն

Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կառ

ՄԵՂԲ Ե ԱՊԱՇԸԻ

Պոլսական կեանքէ քաղաած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գրեց Տիրան Գ. Փափազեան

Գին 60 սանթիմ: Գինի խմբագրութեան:

ԲԱՆԱՍԷՐ

Հնորհակալութեամբ ստացանք Տիրան Գ. Յ. Բասմաջեանի «ԲԱՆԱՍԷՐ»-ին Ա. գիրքը:

Անկեղծօրէն խօսելով, այս հանգէսը մեր մատենագրութեան մէջ առաջնակարգ տեղ մը պիտի բռնէ իր հնախօսական, պատմական, լեզուաբանական, նա մանաւանդ բնագիտական գաղտնիքները երևան բերող ընդարձակ և շահեկան ծանօթութիւններով:

Ջերմապէս կը յանձնարարենք բանասիրաց՝ քաջալերել սոյն օգտաշատ և արգիւնաբեր երկը, վասն զի, յիրաւի մեծ ծառայութիւն մըն է որ կը մատուցանէ Տիրան Բասմաջեան հայ ազգային մատենագրութեան:

Տարեկան 4 գրքի բաժանորդագինն է 20 ֆրանք, կանխիկ: Հասցէ,

BASMADJIAN
112. RD. ROCHECHOUART PARIS

Մ. 2.

ԹՈԹՈՎՄՈՒՆԷ



Գողարիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը փաճատի ի գին 25 սանդիմ, Ա. Զարպհանէլեանի գրատունը, Վառնա:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печантица «Взаимность», — Варна.

Մեծ Վիճակաւ ՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ԲԱՂԱԲԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱԹԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ
Երաշխատրեալ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	թիւեր
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-31	16,000	"

Ամբողջ	Կէս	Փառորդ	Մէկ «թերդ»
10 ֆ.	5 ֆ.	2, 50 ֆ.	1, 25 ֆ.
16 "	8 "	4 "	2 "
20 "	10 "	5 "	2, 50 "
28 "	14 "	7 "	3, 50 "
24 "	12 "	6 "	3 "
17, 20 "	8, 60 "	4, 80 "	2, 15 "
115, 20 "	57, 60 "	28, 80 "	14, 40 "

Գնելու և մանրաբան տեղեկութեանց համար պէճաք է գրել Սեդախանով Տիրան ՍԱՐԳՍԻՍ ԳԱՐԻԲԷԼԵԱՆ, և իսկ գրատու գործակալ սոյն կ'ընկալանալ Վառնա, Մոսկովա:

Շրջակայ քաղաքներէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուղէ, պարտաւոր է առջի կարգերուն փոխարէն ալ վճարել: